



Հրատարակելի Գրութիւններ Ղրկել 920 N. Hoyne Ave., Chicago, Ill.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՄԵՐ ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐՈՒՆ ԵՒ ԲՈԼՈՐ ԶՆԳՈՒՇՑԻՆԵՐՈՒ

Ատենին մեր շրջաբերականով եւ մասնակի նամակներով իմացուցինք ձեզ որ տիրող տնտեսական տառնապալին հետեւանքով, կարօտ Զնդուչցիներու օգնելը մեր նուիրական ու անխտաճելի պարտականութիւններէն մին պէտք է նկատել, եւ այս առթիւ ալ հրահանդեցինք որ սոյն նպատակին համար մասնաճիւղեր իրենց տեղային պայմաններուն համաձայն ձեռնարկներ ընեն եւ արդիւնքը շուտով կեդրոն ղրկեն, անմիջապէս նպատակին յատկացուելու համար:

Ուստի այն մասնաճիւղները որ տակաւին իրենց բաժինը չեն բերած, կ'արժէ որ քիչ մը փութկոտ դառնուն : Փափաքելի է որ անհատ հայրենակիցներ եւս ցոյց տան իրենց հայրենասիրական ոգին :

Կը փութանք ըսել որ Հալէպի մասնաճիւղը առաջին առիթով մեզ ղրկած է օգնութեան կարօտ 58 անձերու (փոքր եւ մեծ) անուանացանկը: Ուրեմն կատարենք մեր սլարտը՝ որքան կարելի է շուտ:

ԶՆԳՈՒՇԻ ՎԵՐԱՇԻՆԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՋՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

«ԾՕՎԱՌ»Ի ԲԱՑԱՌԻԿԸ

Ինչպես անցեալ քիւով յայտարարած էինք, «Ծօլառ»-ի հինգերորդ տարեմուտին առթիւ, յաջորդ քիւը պիտի հրատարակուի 16 էջերով եւ պատկերագրող: «Ծօլառ»-ի վարչութիւնը կը խնդրէ իր աշխատակիցներէն որ իրենց գրութիւնները ընեն կարելի եղածին չափ ամփոփ եւ խնամեալ, որպէս զի որքան կարելի է շատ գրողներու պատեհութիւն տրուի այս քիւին մէջ երեւնալու: Գրութիւններ վարչութեան կամ հմրագրութեան ձեռքը հասնելու եմ մինչեւ Մարտ մէկ:

Այս բացառիկ քիւով հրատարակուելու համար իրենց լուսանկարները խնդրուած հայրենակիցներ քող հանին փութով շարժիլ եւ միասին զրկել երկու տոլար՝ իրրեւ ծախս քրքի պատրաստութեան :

Կը յուսամք թէ հայրենակիցներ պիտի աջակցին վարչութեան եւ խմբագրութեան այս բացառիկ թիւը պահուելու արժանի գործ մը դարձնելու ջանքերուն :

«Ө 0 4 5 0»

ՆՈՐ ՏԱՐԻՆ ԿԸ ՇՆՈՐՀԱԻՈՐԻ
ԻՐ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐՈՒՆ
ԵՒ ԲՈԼՈՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ

ՆՈՐ ՏԱՐԻՆ

1930 տարին ալ նետեցինք մեր վրայէն բոլոր անհետա-
քոյ տարիներուն նման :

Ի հարկէ նոր տարիէն ներս մտնելէ առաջ պէտք է պահ մը կանգ առնել եւ մեր խորհրդածութիւններն ընել անհետացող տարուայ մասին եւ մտածել թէ ի՞նչ ըրած ենք: Խոնջ ըրած ենք իբրեւ հայ մեր հայրենիքին հանդէպ, մեր կազմակերպութիւններուն հանդէպ, իբրեւ անհատ մեր ազգականներուն եւ բարեկամներուն հանդէպ, եւ վերջապէս իբրեւ Չնդուշի մեր պարտականութիւնը կատարած ենք մեր սիրելի ծննդավայր Չնդուշի վերջ. Միութեան հանդէպ: Այս խորհրդածութիւնները ընելէ վերջ, երբ կը տեսնենք թէ չենք կրցած կատարել մեր պարտականութիւնները, պէտք է որոշել որ յառաջիկայ տարին հայրենակցական ոգիով, առնական կամքով սկսինք եւ առաջին օրէն իսկ աշխատինք կատարել մեր պարտականութիւնները:

Եթէ կը զգանք թէ 1930ը անցուցինք առանց օգտակարութեան, աշխատինք որ այս նոր տարին, 1931ը ընենք օգտակար տարի մը, եռանդուն գործունէութեան տարի մը մեր Միութեան համար, որուն նպատակն է Նոր Զնգուշի շինութիւնը Նուսպարաշէնի մէջ:

Երբ վերջնայ 1931 տարին իր փոյալուն գործունէութեամբ, ան ալլեւս չպիտի մոռցուի միւս տարիներուն նման, ալ 1931ի օգտակարութիւնն ու գործունէութիւնը պիտի արձանագրուի ոսկի տառերով մեր հայրենակցական սլաւօմովեան մէջ՝ զայն ասպրեցնելով մեզի հետ այնքան ատեն, որքան մէկ Չնդուչի իսկ տակաւին արիւն ունի իր երակներուն մէջ:

Ամէն մէկ Ձեգուլչի պէտք է այս հաւատքով եւ յոյսով
ու զոհաբերութեան ոգիով սկսի նոր տարին, նշանաբան ու-
նենալով 1931ը ընել Ձեգուլչիներու գործունէութեան եւ
յաջողութեան վարդապետն տարի մը:

Լորէնս

Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

«ԾՕՎԱՌ»Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵՄՈՒՏԸ

Դեկտեմբեր 20, Կիրակի երեկոյ, ամէն տարուան պէս այս տարի ալ «Ծօվառ»-ը իրենց բարեկամներով միասին տօնեցին «Ծօվառ»ի 5րդ տարեմուտը, Տէր եւ Տիկին Լ. Վարդանեանի բնակարանին մէջ: Ե. Աշտարակենց «Ծօվառ»ի վարչութեան կողմէ բարի դալուստ մաղթեց ներկաներուն եւ բացատրեց Հայրենակիցներու ունեցած սէրը Հանդէպ «Ծօվառ»ի. յոյս յայտնեց որ հետու չպիտի ըլլայ այն թուականն ալ երբ Նոր Զնդուշի նորաչէն տուններուն նկարները պիտի տեսնենք «Ծօվառ»ի մէջ:

Ներկաներէն «Ծօվառ»ի գրուածութիւն ըրին ու անոր ծառայութիւնը գնահատեցին Պրն. Դադար Բունեան, Յ. Խոհարարեան, Խ. Եղոյեան, Խոր. Տաղտիկեան, Տիկին Ա. Եօքսուլեան, Տիկին Աղնիւ Ն. Յատկալուրեան, Պ. Եայլաեան եւ տարեց Հայրենակից Տաղտիկ Խաչօն, որ օրինակով մը «Ծօվառ»-ը իրենց ցորենի արտի մը եւ գեղեցիկ օրհնութիւնով մը վերջացուց իր խօսքերը:

Երգեր եւ արտասանութիւններ ըրին փոքրիկներ Գալունի Բունեան, Մարտիրոս Պ. Աղնալուրեան, Մարտիրոս Խ. Եղոյեան, Սարգիս Պ. Եայլաեան, Սարգիս Ն. Յատկալուրեան եւ Օշին Աշտարակենց:

Դնահատականեր եկած էին Զնդուշի Վերջ. Միւսթեան Կեդր. Վարչութենէն, Ա. Մինասեանէ՝ Հինգ տղար նուէրով միասին, «Ծօվառ»ի եռանդուն անդամ Մ. Յատկալուրեանէ, Ս. Յակոբեանէ եւ Ճան Աշտարակեանէ:

Օրուան հիւրերը «Ծօվառ»ի կողմէ հիւրասիրուեցան պտուղով, թէյով ու քէյքով: Աղնիւ տիկիններ «Ծօվառ»ի պարզ սեղանը աւելի ճոխացուցին իրենց բերած անուշեղէնով. Մայր Գաղեան շինած էր ափսէ մը ալանջանուշ, Տիկին Ա. Ն. Յատկալուրեան ափսէ մը կարկանդակ, Տիկին Խ. Պոռեան տուսի մը քուքի, Տիկին Աստղիկ եւ Տիկին Զապէլ համեղ չօրէկ:

Եղան խաղեր եւ սրախօսութիւններ, ներկաներ գիշերուան ժամը մէկին դո՛ւ տպաւորութեամբ մեկնեցան տաներով իրենց հետ լաւ խորհուրդներ:

ՆԵՐՎԱՅ ՄԸ

«ԾՕՎԱՌ»Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵՄԱՐՁԸ ԼՕՐԷՆԱՍԻ ՄԷՋ

Դեկտ. 27ի Շաբաթ իրիկուն «Ծօվառ»ի բարեկամներուն կողմէ տօնուեցաւ «Ծօվառ»ի հինգերորդ տարեդարձը Տէր եւ Տիկ. Ս. Յակոբեանի տան մէջ, հակառակ օրուան սաստիկ ձիւնին երկսեռ բաղմութիւն մը ներկայ էր:

Այդ օրուան համար մասնաւորապէս պատրաստուած էր Բէյք մը, «Ծօվառ» վերտառութիւնը կրող, որուն վրայ կը պլլային Հինգ մօմեր: Հանդէսը կազմակերպող եւ օրուան ատենապետ Պրն. Թուխման Պապեան խօսեցաւ «Ծօվառ»ի մատուցած օգտակարութեան մասին եւ ըրաւ օգտակար թելադրութիւններ, որմէ յետոյ հրաւիրեց «Ծօվառ»ի թղթակից Պրն. Լ. Պետրոսեանը եւ Պրն. Ս. Յակոբեանը, որոնք իրենց ունեցած տպաւորութիւնը յայտնեցին եւ քաջալերական դտան «Ծօվառ»ի երեւումը: Յետոյ խօսեցաւ մեր տարեց Հայրենակիցը Պալօ Աղբար, որ Զնդուշի յատուկ ոճով պատմեց Հայրենի կեանքէն դրուագներ եւ Ծօվառի վրայ ունեցած ուրախութիւնները վերյիշեց:

Պրն. ատենապետը շնորհակալութիւն յայտնեց խօսողներուն: Բէյքը կտրելու ատեն փափաք յայտնուեցաւ որ նիւթական մասնակցութիւն մը ըլլայ, քիչ ժամանակի մէջ գոյացաւ 15 տղար. Օր. Նուարդ Հաղարվարդեան յայտարարեց թէ ինք տղար մը պիտի տայ եթէ գումարը բարձրացուի 20ի: Օրիորդին առաջարկը դնահատուեցաւ եւ գումարը բարձրացաւ 19ի: Օր. Հաղարվարդեան տուաւ մէկ տղարը եւ Բէյքը կտրելու գործը տրուեցաւ իրեն: Այս նշանաւորութեան իրենց մասնակցութիւնը բերին նաեւ փոքրիկները, 50 եւ 25 սէնթով: Վերջէն եկողներ ալ մասնակցեցան եւ ընդհ. գումարը եղաւ 26 տղար:

Կ Ա Ր Ե Ի Ո Ր

Մեր Նոր Զնդուշի Հաշուոյն Բարեգործականի երկրորդ վճարման ժամանակը արդէն անցած է, եւ Հարկ է որ փութացնենք վճարումը: Ուստի ջերմօրէն կը խնդրեմ բոլոր դրամական խոստում կատարողներէ եւ ցարդ նուիրատուութեան չմասնակցող Զնդուշի Հայրենակիցներէն որ բարեհաճին փութացնել իրենց նուէրները Կեդրոնի գանձապահին եւ կամ տեղւոյն մասնաճիւղի վարչութեան: Նուիրատուներ թող չմոռնան պարզ կերպով դրել իրենց անունը եւ հասցէն: Կեդրոնի գանձապահին հասցէն է՝

B. Stephanian — 68—30 Myrtle Ave., Glendale, N. Y.

«ԾՕՎԱՌ»Ի ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Յաճախ Նիւ Եօրքի չըջանի մեր Հայրենակիցներէն եւ մասնաւորապէս «Ծօվառ»ի ընթերցողներէն խիստ շատ գովեստներ լսած եմ «Ծօվառ»ի հրատարակութեան եւ անոր մատուցած օգտակարութեան մասին: Այս առթիւ վստահ եմ որ երբ այսօր իրենց դիմում կ'ըլլայ «Ծօվառ»ի անունով փոքր ինչ նուէրի համար, սիրով պիտի բերեն իրենց մասնակցութիւնը: Շատերու համար դիւրութիւն մը տուած ըլլալու համար ստանձնած եմ նուիրահաւաքի պարտականութիւնը: Ուստի այն Հայրենակիցները որոնք իրենց դրամական դնահատութիւնը կ'ուղեն բերել, մեր այս խիստ օգտակար թերթին, կրնան հասցնել եւ կամ ղրկել հասցէիս՝

A. Minasian — 574 17th St., West New York, N. J.

Դեղարուեստական բաժնին իր մասնակցութիւնը բերաւ Պրն. Մ. Խենդիկեան, որ երգեց Ժողովրդական երգեր, նոյնպէս միասին երգեցին Պրն. Ա. Ոսկերիչեան եւ Ս. Յակոբեան:

Հանդէսի պաշտօնական մասը լրանալէ յետոյ, սկսաւ ուրախութիւնը որ տեւեց մինչեւ ուշ ատեն, երբ ամէն մարդ տուն մեկնեցաւ վայելելով ընտանեկան գեղեցիկ ժամանակ մը:

Շնորհակալութիւն Տէր եւ Տիկ. Ս. Յակոբեանի, որոնք սիրալոյս տրամադրեցին իրենց տունը, Պրն. Թ. Պապեանին՝ հանդէսը կազմակերպելուն համար, նաեւ բոլոր հանդիսականներուն՝ իրենց նիւթական եւ բարոյական քաջալերութեան համար:

ՆԵՐՎԱՅ ՄԸ

ՏԱՌԱՀԱՆԴԷՍ ՆԻԻ ԵՈՐՔԻ ՄԷՋ

ՆԻԻ ԵՈՐՔ. — Զնդուշի Վերաշինաց Միւսթեան Նիւ Եօրքի եւ Եօնիւն Սիթիի (նորակաղմ) մասնաճիւղերու միացեալ ծառահանդէսը տեղի ունեցաւ Դեկտ. 28, 1930, Կիրակի երեկոյ ժամը 6-ին Ս. Դ. Հ. Բլլային մէջ, Նիւ Եօրք:

Նիւ Եօրքի մասնաճիւղի ատենապետուհին Տիկ. Վ. Փապուճեան հանդէսը բացաւ շնորհակալութիւն յայտնելով ներկայ Հայրենակիցներուն, իսկ ցաւ յայտնեց որ կարգ մը Հայրենակիցներ կը բացակայէին, քանի որ այս ձեռնարկը ստրբուած էր ուղղակի Հայրենակցական տաքուկ մթնոլորտ մը ստեղծելու եւ անոր միջոցաւ ալ մեր կարօտ Զնդուշիները ուրախացնելու նպատակով:

Տիկ. Փապուճեան անմիջապէս դործի անցաւ եւ տանի չափ փոքրիկներու միջոցաւ ներկայացուց Գրիստոսի ծնունդը, որմէ վերջ այս պգտիկները, բոլորն ալ Զնդուշիներու զաւակներ, ըրին հայերէն արտասանութիւններ եւ ներկաներէն ծափեր խլեցին: Գեղեցիկ էր նոյնպէս այս պըրթ

տիկներուն պարը որ յառաջ տարաւ Օր. Մ. Ստեփանեան իր ջութակով:

Հանդէսէն վերջ փոքրիկներուն բաշխուեցան կաղանդի նուէրներ, եւ սկսաւ կերուսումը: Անուշեղէններ եւ կարմրեցում հաւ մը աճուրդի հանեց Պրն. Գասպար Մինասեան, որոնցմէ գոյացաւ կոկիկ դումար մը, տեղի ունեցաւ վիճակահանութիւն մը ուղղակի տեղին վրայ եւ շահողները ստացան իրենց նուէրները:

Կարգացուեցաւ նամակ մը Պրն. Ա. Թուրոյեանի կողմէ գրուած, որով ցաւ կը յայտնէր իր բացակայութեան համար, բայց իր մասնակցութիւնը կը բերէր աճուրդի համար առկա մը նուիրելով. տուիրն վրայ գրուած էր հետեւեալը.

Քաջ եւ կտրիճ էր Տէր Արշէն Քահանան. երբ այս տուիր բացուի՝ բոլորն ալ պիտի դարձանան. տուէք մէկ մէկ տոլար, որ կարօտեալներն ալ ուրախանան:

Ուստի Շէքերեան դացեր է Կիպրոս. Ապտըլենց Արթուրն էր Չնդուշի հերոս. ձեր մէջ էն հարուստն է Ստեփանեան Պետրոս:

Ներկաներու ծափերուն մէջ տուիր յանձնուեցաւ Պրն. Պ. Ստեփանեանի, որ քանի մը խօսքով իր շնորհակալութիւնը յայտնեց եւ ի վնասատուութիւն նուիրեց տասը տոլար եւ ինքը ստացաւ տուիրը, որուն պարունակութիւնն էր Պրն. Թուրոյեանի ձեռքով պատրաստուած պատճեղ, շարոց եւ չրէ թարխանայ:

Ուրիշ անակնկալ տուի մըն էր որ մէջտեղ բերաւ Պրն. Ա. Մինասեան, յայտարարելով որ խիստ արժէքաւոր նուէր մըն է որ յօդուտ կարօտեալներուն այս երեկոյթին կը նուիրէ: Տուիրն պարունակութիւնը ներբողելէ յետոյ աճուրդի հանեց, որմէ գոյացաւ 24 տոլար եւ շահեցաւ Պրն. Ուստի տուիր էր: Այս տուիրն անձանօթ պարունակութիւնն էր Զօր. Անդրանիկի նկարը որ Ա. Մինասեան տարի մը առաջ իր Ֆրանսայէ վերադարձին հետը բերած էր:

Հանդէսը անցաւ լաւ տպաւորութեան տակ եւ գոյացաւ կոկիկ դումար մը, շնորհիւ ներկայ հայրենակիցներու զոհողութեան: Իսկ անոնք որոնք այլեւայլ պատճառներով կը բացակայէին այս ծառահանդէսէն, կ'իմանամ որ Կեղր. Վարդութիւնը մասնաւոր դիմումներ պիտի ընէ անոնց ալ բաժին մասնակցութիւնը ապահովելու եւ գոյացած դրամը իր նպատակին դործածելու համար որքան կարելի է շուտ: Ուստի, թող պատրաստ ըլլան ամէն անոնք որ կը բացակայէին սոյն ծառահանդէսէն:

ԼՐԱՏՈՒ

ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Լորէնս այցելութեանս առթիւ ուրախ զգացի մեր հայրենակից Պրն. Ս. Յակոբեանը առեւտրական ասպարէզին մէջ տեսնելով:

Մէկզմէկու օգնելու գաղափարը պարտականութիւն կը զնէ վրաս թելադրել Լորէնսի մեր հայրենակիցներուն, որպէս զի քաջալերեն զայն:

Յաջողութիւն կը մաղթեմ իրեն:

ԱՆՅՈՐԴ

ՇՆՈՐՀԱՎԱԼԻՔ

Տէր եւ Տիկին Օհանէս Թուրոյեան շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր ազգականներու եւ բարեկամներու, որ իրենց ներկայութեամբ, հեռադրով, նամակներով շնորհատրեցին ամուսնութիւնը իրենց եղբոր՝ Հաճի Թուրոյեանի ընդ Օր. Քնարիկ փրկիկանի:

Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ.— «Ծօլառ»-ի 1930ի տարեկան հաշուեկշիւը պիտի հրատարակենք յաջորդ թիւով:

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ «ԾՕՎԱՌ»-Ի

ԶՆԳՈՒՇՑԻՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

ՆԻՒ ԵՈՐԳ.— Տէր եւ Տիկ. Ա. Թուրոյեան աղջիկ դաւակով մը բաղդաւորուեցան: Մեր խնդակցութիւնը:

*** Պրն. Վարդար Հարամյան, որ քանի մը շաբաթ է վեր հիւանդանոց կը մնար դործողութեան համար, տուն վերադարձած է եւ ապաքինման ճամբուն մէջ է:

*** Տէր եւ Տիկին Գ. Քէհեախաչոյեանի փոքրիկ աղջիկը իր մեծ քրոջ հետ փողոցէն անցնելու պահուն օթօմօպիլը կը դարնէ, անմիջապէս կը փոխադրուի հիւանդանոց, ուր խնամուելէ վերջ տուն կը բերուի: Մեր ցաւակցութիւնը կը յայտնենք այս դժբախտ արկածին համար:

ԼՕՐԷՆՍ.— Մեր Ատիլցի հայրենակիցներէն Պրն. Կ. Սիմոնեան իր մահկանացուն կնքեց Դեկտ. 13ին. յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Դեկտ. 17ին, Հայր Ղ. Վրդ. Մարդուկէսեանի ձեռամբ: Մեր ցաւակցութիւնը կը յայտնենք եւ միաթարութիւն կը մաղթենք հանգուցեալի սպարազաններուն:

ԼՕՐԷՆՍ.— Մեր Ատիլցի հայրենակիցներէն Պրն. Կ. Սիմոնեան իր մահկանացուն կնքեց Դեկտ. 13ին. յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Դեկտ. 17ին, Հայր Ղ. Վրդ. Մարդուկէսեանի ձեռամբ: Մեր ցաւակցութիւնը կը յայտնենք եւ միաթարութիւն կը մաղթենք հանգուցեալի սպարազաններուն:

*** Տիկ. Ս. Պ. Աղնոյեան աստիճաններէն վար իյնալով թեւը վնասած է. այժմ ապաքինման մէջ է: Մեր ցաւակցութիւնը կը յայտնենք եւ առողջութիւն կը մաղթենք:

*** Մեր հայրենակիցներէն Տէր եւ Տիկ. Թ. Պապաեանի, Ս. Պարսամեանի, Գ. Եղամուրեանի, Ա. Աղաբեանի, Ս. Չաքրեանի, Յ. Սիւսեանի, Ա. Ոսկերիչեանի, Ն. Կօկիլեանի, Ա. Արզունեանի, Յ. Սեդրիկեանի, Յ. Ն. Փապուհեանի զաւակներուն հարսանիք հիւանդութենէն ապաքինման առթիւ մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

*** Մեր Ատիլցի հայրենակիցներէն Տէր եւ Տիկ. Ս. Գիլիբեան աղջիկ դաւակով մը բաղդաւորուեցան: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

ԼՈՒՍԻՆ

ՅՐԷՅԻՍ.— Սր. Յակոբի տօնին առթիւ հայրենակիցներու հոծ բաղմութիւն մը հաւաքուած էր Զաօ Ս. Սըրբմեանի բնակարանը. տեսնուած էր պատշաճ պատրաստութիւն օրուան հիւրերը հիւրասիրելու համար: Եղան պարեր, ուրախութեան պահուն ներկաներ չմոռցան նաեւ «Ծօլառ»-ը եւ հանգանակեցին 7 տոլար: Ներկաներ ուշ առնեն զոհ տպաւորութեամբ մեկնեցան:

ՇԻՔԱԿՕ.— Տէր եւ Տիկին Պ. Եօքսուլեան Սինսինատիէն քաղաքս այցելեցին եւ հիւրասիրուեցան Տէր եւ Տիկին Զան Եօքսուլեանէ: Հիւրերը այցելեցին բոլոր հայրենակիցներու: Մեր այս սիրելի հայրենակիցները տակաւին «Ծօլառ»-ը թերթը չէին տեսած, զայն տեսնելով շատ ուրախ եղան եւ փափաքեցան որ յետ այսու իրենց ալ զրկուի:

*** Յունվար 11ին տեղի ունեցաւ Ծօլառցիներու անդամական պտոյտը. անցաւ շատ հաճելի:

*** Տէր եւ Տիկ. Յ. Ա. Ապրդէթեան նոր տարիին օրը ունեցան ինքնաշարժի արկած մը, բարեբախտաբար անոնց ստացած վէրքերը շատ թեթեւ են: Մեր ցաւակցութիւնը կը յայտնենք արկածին համար:

*** Պրն. Գասպար Պապաեան նոր տարուան առթիւ այցելեց քաղաքս եւ հիւրասիրուեցաւ իր կնքահօր Տէր եւ Տիկին Պ. Վարժապետեանի կողմէ:

*** Տէր եւ Տիկին Յ. Աղնաւուրեան մանչ զաւակ մը ունեցան: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

ԼՐԱՏՈՒ

ՎԱԼԱՆՍ.— Հոկտ. 25ին Սէն Ծամօնի Մալաթիոյ Կրթասիրաց Ընկ. թեան սրահին մէջ տեղի ունեցաւ ամուսնութիւնը Պրն. Սերոր Տէմիրճեանի ընդ Օր. Ասողիկ Տօնապետեանի (Տիգրանակերտցի), բարեկամներու լայն շրջանակի մը մէջ: Կը շնորհաւորենք նորապսակ ամուսինները:

Մարտի 11-ի հայրենակիցներէն Պրն. Խ. Գուրուհան իր նոր պաշտօնով իբրեւ շրջուն գործիչ Ռ. Ա. Կուսակցութեան Յրանսայի շրջանակին քաղաքս ալցեց, տեսնուեցաւ բոլոր հայրենակիցներու հետ եւ մեկնեցաւ դէպի Լիոն: Բարի ճանապարհ եւ յաջողութիւն կը մաղթենք:

Յ. Կ. Թ.

ՀԱԼԷՊ.— Դեկտ. 12ին սեւ հողին յանձնեցինք Միքայէլ Յարութիւնեանի քոյրը Եղսա, 75 տարեքին մէջ: Ծերունին սիրուած էր գաղութէն, ան միշտ կը պատմէր անցեալէն եւ շատ կը հետաքրքրուէր հայրենակցական գործերով: Դադաղին հետեւեցան բոլոր հայրենակիցներ: Երկնային միւսիւրութիւն կը մաղթենք բոլոր պարագաներուն եւ հանգիստ հանգուցեալի աճիւնին:

Պրն. Նիկողոս Գասապեան տակաւին անկողնոյ կը ծառայէ: Մեր ցաւակցութիւնը կը յայտնենք եւ շուտափոյթ ապաքինում կը մաղթենք:

*** Պրն. Աւետիս Օհանէսեանի (Խարբերդցի) ընդ Օր. Զուարթ Մուրատեանի հարսանեկան արարողութիւնը տեղի ունեցաւ Նոյ. 28ին, հօրեղբոր տան մէջ: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք Մուրատեաններուն եւ բոլոր ազգական բարեկամներուն. երջանիկ կեանք կը մաղթենք նորաստակ ամուսին:

Մ. Թ. ՓՈՒՍՈՒԼԵԱՆ

ՊՈՍԹՈՆ.— «Ծօլառ»ի անդամներէն Պրն. Ա. Գուրուհան իր եղբորը հետ քաղաքս ժամանեց Շիքալոյէն: Բարի գալուստ կը մաղթենք:

ՄԱՐՍԷՅԼ.— Հալէպի մեր հայրենակիցներէն Շահինեան եղբայրներ՝ Աւետիս, Նաչատուր եւ Առաքել, քաղաքս ժամանեցին: Բարի գալուստ կը մաղթենք:

*** Պրն. Նաչատուր Թուխմանեան քաղաքս մեկնեցաւ Լիոն: Բարի ճանապարհ եւ յաջողութիւն կը մաղթենք:

*** Թուխմանէ մէկ քանի օր առաջ 12 հայրենակիցներով հաւաքուած էինք Շահինեան եղբայրներու սենեակը: Մեզի հետ էին Տէր եւ Տիկին Զինագործեան, Տէր եւ Տիկին Ապրէլեան եւ Օրիորդ Թուխմանեան: Ունեցանք հայրենակցական լաւ ժամանք եւ եղան զուարճախօսութիւններ:

Պ. ՏԱՐՂՈՒՆԵԱՆ

ՀԱՐՍԱՆԻՔ

ՆԻԻ ԵՈՐԲ.— Դեկտ. 14, Կերակի երեկոյ, Հ. Յ. Դ. Գլխին մէջ կատարուեցաւ պատկառութեան հանդէսը Պր. Թ. Թուխմանեանի (Հաճի) ընդ Օր. Բնարիկ Փիլիկեանի (Ատապաղարցի), ձեռամբ Տէր Բհնյ. Հէքիմեանի եւ կընքահայրութեամբ Տէր եւ Տիկին Նաչատուր Աղաւուրեանի: Ներկայ էր երկու կողմէն հրաւիրեալներու հոծ բազմութիւն մը:

Պսակի արարողութենէն վերջ, Պր. Պաղտասար Նիզամեան կարգաց տասնի չափ շնորհաւորական հեռադիրներ, նոյնպէս մասնաւոր շնորհաւորական նամակ մը Չնդուշի Վերաչինաց Միութեան Կեդր. Վարչութեան կողմէ զրկուած, յիշեցնելով որ չմոռցուին այս եւ նման ուրախութիւններու առեւ Չնդուշի կարօտեալները:

Հանդիսականները հիւրասիրուեցան զանազան տեսակի սէնտուրիներով, ըմպելիներով եւ պտուղներով: Հայկական նուազը ուրախ պահէր ընծայեց ներկաներուն. պարի եւ զուարճութեան պահուն 50 տողար գոյացաւ ի նպաստ Չնդուշի կարօտեալներուն: Կը շնորհաւորենք նորաստակ ամուսն եւ երջանիկ կեանք կը մաղթենք իրենց:

ՀԱՐՍՆԵՒՈՐ

ՆՇԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Պրն. Փիթ Վարժապետեանի նշանախօսութիւնը ընդ Օր. Սաթեմիկ Իսրայէլեանի տեղի ունեցաւ Դեկտ. 12, 1930ին, Տէր եւ Տիկին Կ. Գուրուհանի բնակարանին մէջ, կնքահայրութեամբ Պրն. Գ. Պապեանի (Միլլօքիէն): Նշանի օրհնութիւնը կատարեց քաղաքիս հովիւ Արթ. Տէր Վահան Բահանայ Կիլիսիան: Պատուասիրութիւնը ճոխ կերպով պատրաստուած էր Տէր եւ Տիկին Կ. Գուրուհանի կողմէ:

Ուրախութեան մասնակցեցան բոլոր Ծօլառցիներ. «Ծօլառ»ի կողմէ նուիրուած էր գեղեցիկ փունջ մը վարդեր:

Ներկաներ բոլորն ալ պարեցին ու զուարճացան՝ վազելին նուագախումբին առաջնորդութեամբ:

Ուրախութիւնը տեւեց մինչեւ առաւօտեան ժամը հինգ:

Ներկաներ զոհ տալուութեամբ մեկնեցան:

Յաջորդ օրը Պրն. Փիթին հօր՝ Պրն. Ա. Վարժապետեանի հրաւերով իր տան մէջ տեղի ունեցաւ ճաշկերոյթ մը:

Կատարուեցաւ խօսակցութիւններու եւ մօտիկ բարեկամներու ուր եղան աչք լոյսի բարեմաղթութիւններ եւ շնորհակալութիւններ:

*** Մէկ շաբաթ յետոյ տեղի ունեցաւ այս գոյգին մոսնուութիւնը առանց հաւաքոյթի ու աղմուկի: Կը շնորհակալուենք նորաստակ ամուսն եւ կը մաղթենք իրենց երջանիկ կեանք ու երկար տարիներ:

ՃԱՇԿԵՐՈՅԹ.— Ի պատիւ նորաստակներուն Դեկտ. 28ին Տէր եւ Տիկին Ս. Պողոսեան իրենց Կլէն էլընի բնակարանին մէջ ճաշկերոյթ մը տուին, ուր ներկայ էին Տէր եւ Տիկին Դ. Բուհեան եւ Ե. Ալաւարակեան: Հիւրերը պատուասիրուեցան գեղեցիկ վազելութեամբ: Եղան մտերմիկ խօսակցութիւններ եւ ժամանակը անցաւ խիստ հաճելի:

Ծ Ն Ո Ւ Ն Դ

Ուրախութեամբ կ'իմանանք որ Տէր եւ Տիկին Պ. Փապուհեան աղջիկ զաւակով մը բաղդաւորուած են: «Ծօլառ»ի Վարչութիւնը եւ բոլոր Ծօլառցիներ իրենց անկողն խնդրաւթութիւնը կը յայտնեն իրենց անխոնջ ու նուիրաբերող խնամքին:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ԾՕՎԱՌ»

ՆՈՒԷՐՆԵՐ «ԾՕՎԱՌ»Ի

Զաքօ Ս. Սըրբեան, Յրէզնո
Ն. Պիճանեան, Լուս Անճէլըս
Տոբթ. Գ. Մանուկեան, Էլճին, Իււ.
Խաչ. Փիլոսեան, Գլխը, Գալիթ.

Գումար՝

ՆԻԻ ԵՈՐԲԷՆ հետեւեալ նուիրատուութիւնները եղած են «Ծօլառ»ի, Պրն. Ա. Միխայեանի ձեռամբ:

Անդրէաս Միխայեան 5 տողար, Աւետիս Թուրոյեան, Նաչատուր Էդուրեան, Սարգիս Մաթոսեան 2-ական տողար, Գասպար Միխայեան 1 տողար: Գումար՝ 12 տողար:

Լօրէնսի մէջ «Ծօլառ»ի հանդէսին առթիւ եւ յետոյ դուրսը շարունակուած նուիրատուութեան մասնակցողները, ցանկը հետեւեալն է.—

Անթանոս Միրիմանեան 5 տողար, Պողոս Տէր Նաչատուրեան 3, Թ. Պապեան, Ս. Արղունեան, Գարեգին Գապայեան, Յովհ. Ն. Փապուհեան, Յակոբ Քէհեախաչոյեան, Սարգիս Թօփալեան 2-ական տողար, Նաչատուր Արղունեան, Սեդրակ Պողոսեան, Մարտիրոս Նենդիկեան, Ս. Հազար վարդեան, Եղիա Չոնդոյեան, Մ. Գրիգորեան, Ա. Ոսկերիկեան, Ս. Յակոբեան, Յ. Մաչուլեան, Ս. Գօգմազեան, Անտոնեան, Ն. Կօկիչեան, Լ. Պետրոսեան, Տիկ. Վ. Թ. Պապայեան, Օր. Ն. Հազար վարդեան, Ս. Հաճիյալոբեան, Տէր եւ Տիկ. Պ. Ժամկոչեան, Տէր եւ Տիկ. Ա. Գարոյանեան (Չմկաճապցի), Յովհ. Մանուկեան 1-ական տողար, Տիկ. Թ. Ե. Չոնդոյեան, Տիկ. Մ. Ն. Կօկիչեան, Օր. Ս. Կօկիչեան, Մ. Նենդիկեան, Տիկ. Մ. Գրիգորեան, Փոքրիկ Թ. Ոսկերիկեան 50-ական սէնթ, Ա. Ոսկերիկեան, Տիկ. Չոնդոյեան, Տիկ. Մ. Յակոբեան, Ե. Չոնդոյեան, Ա. Սարգիսեան, Փոքրիկներ Օր. Կ. Կօկիչեան, Ն. Ոսկերիկեան, Մաչուլեան, Օր. Մ. Պետրոսեան, Օր. Ա. Մաչուլեան, Ս. Յակոբեան, Օր. Օղիտա Պապեան 25-ական սէնթ: Ընդհանուր գումար՝ 45 տողար:

Մեր շնորհակալութիւնը բոլոր նուիրատուներուն: